Закрытое акционерное общество
«Газпром Армения»
(ЗАО «Газпром Армения»)

Учреждение «Учебно-спортивный комплекс»

«Գազպրոմ Արմենիա»
փակ բաժնետիրական ընկերություն
(«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ)

«Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկ

ПРИКАЗ
ՀՐԱՄԱՆ

«10» փետրվարի 2026թ. № 72-Ա

2026-2027 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ (2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ 2027 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-Ը) ԸՆԹԱՑՔՈՒՄ «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՐՈՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՀԻՄՆԱՐԿԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑ ԸՆԴՈՒՆՎՈՂ (ՏԵՂԱՓՈԽՎՈՂ) ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ԿՐԹԱԿԱՆ (ՏԱՐՐԱԿԱՆ, ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ) ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿՆՔՎՈՂ ԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2027 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-Ն ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության կողմից 06.02.2026 թվականին տրված N Ն/42.2/6288-2026 համաձանությունը և ղեկավարվելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ մասով, «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի (այսուհետ՝ Հիմնարկ) կանոնադրության 84-րդ կետի 7-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել 2026-2027 ուսումնական տարվա ընթացքում՝ 2026 թվականի սեպտեմբերի 1-ից 2027 թվականի ապրիլի 1-ն ընկած ժամանակահատվածում, Հիմնարկի՝ Հայաստանի Հանրապետության պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, հայերենով՝ ռուսաց լեզվի պարտադիր դասավանդմամբ, տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր և միջնակարգ ընդհանուր կրթության կրթական ծրագրերով կրթական գործունեություն իրականացնող հանրակրթական դպրոց, և Հիմնարկի՝ Ռուսաստանի Դաշնության պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, ռուսերենով՝ հայերենի պարտադիր դասավանդմամբ, տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր և միջնակարգ ընդհանուր կրթության կրթական ծրագրերով, կրթական գործունեություն իրականացնող հանրակրթական դպրոց ընդունվող (տեղափոխվող) երեխաներին (սովորողներին) կրթական ծառայությունների մատուցման համար կնքվող և 2026 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2027 թվականի ապրիլի 1-ն ուժի մեջ մտնող պայմանագրերով ուսման վարձավճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

ՏՆՕՐԵՆ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
«Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի տնօրենի
2026 թվականի փետրվարի 10-ի N 72-Ա հրամանի

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

2026-2027 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ 2027 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՀԻՄՆԱՐԿԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ, ՀԱՅԵՐԵՆՈՎ՝ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՄԲ, ՏԱՐՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ, ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑ, ԵՎ ՀԻՄՆԱՐԿԻ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ, ՌՈՒՍԵՐԵՆՈՎ՝ ՀԱՅԵՐԵՆԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՄԲ, ՏԱՐՐԱԿՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ, ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ, ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑ ԸՆԴՈՒՆՎՈՂ (ՏԵՂԱՓՈԽՎՈՂ) ԵՐԵԽԱՆԵՐԻՆ (ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ) ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿՆՔՎՈՂ ԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2027 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-Ն ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ

1. 2,340,000 (երկու միլիոն երեք հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ՝ մեկ ուսումնական տարվա համար, այդ թվում՝ այլ ուսումնական հաստատությունից Դպրոց կամ Դպրոցի սովորողի՝ Դպրոցի հաջորդ կրթական աստիճան՝ տարրական դպրոցից (1-4-րդ դասարաններ) միջին (հիմնական) դպրոց (5-9-րդ դասարաններ) կամ միջին (հիմնական) դպրոցից ավագ դպրոց (10-12-րդ դասարաններ) տեղափոխվելու եղանակով:

2. Կրթական ծառայությունները Հիմնարկի տնօրենի հրամանով հեռավար (դիստանցիոն) եղանակով մատուցելիս՝ կրթական ծառայությունների մատուցման վերաբերյալ կնքված պայմանագրի գնի նկատմամբ կիրառվում է 20 (քսան) տոկոս զեղչ:

3. Մեկ ընտանիքից Դպրոց կամ Մանկապարտեզ հաճախող երկրորդ երեխայի համար կիրառվում է զեղչ՝ մեկ ուսումնական տարվա վճարի դրույքաչափի նկատմամբ 10 (տասը) տոկոսի չափով: Երկրորդ երեխայից (սովորողից) հետո յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար կիրառվում է նախորդից ավել ևս 10 (տասը) տոկոսի չափով զեղչ:

4. Սույն հավելվածի 1-ին կետով սահմանված կրթական ծառայությունների վճարների դրույքաչափերը գործում են սովորողի կողմից անընդմեջ (առանց կրթական ծառայությունների մատուցման մասին պայմանագրի ընդհատման), ըստ Դպրոցի համապատասխան կրթական աստիճանի՝ տարրական դպրոցում (1-4-րդ դասարաններ), հիմնական (միջին) դպրոցում (5-9-րդ դասարաններ) կամ ավագ դպրոցում (10-12-րդ դասարաններ), ուսումնառության ավարտը և այդ ընթացքում ենթակա չեն փոփոխման: